

**Ֆեդերիկո Ալպի**  
**Բժշկական նյութեր Գրիգոր Պահլավունու գրվածքներում**  
Federico Alpi – Medical Fragments by Grigor Pahlawowni Magistros

Գրիգոր Պահլավունի Մագիստրոսի «Թղթերը» հանդիսանում են XI դարի հայոց պատմության կարևորագույն աղբյուրներից մեկը: Գոհար Մուրադյանի «Մատենագիրք Հայոց» շարքում վերջերս հրատարակած նոր խմբագրության շնորհիվ՝ այս բարդ տեքստն ավելի մատչելի դարձավ հայագիտությանը: Մինչդեռ «Թղթերից» հնարավոր է քաղել բացառիկ պատմական տեղեկություններ, դրանցից օգտվելու համար գիտնականից պահանջվում է քրտնաջան աշխատանք՝ Մագիստրոսի խրթին եւ, հաճախ, անհասկանալի ոճն ըմբռնելու համար:

Չնայած այս դժվարություններին, քանի որ Մագիստրոսն ընդօրինակել է բյուզանդական նամակագրական ձևեր, դա մեզ հնարավորություն է տալիս ուսունասիրել նրա նամականին եւ բացահայտել նրանցում ընդգրկված պատմական տեղեկությունները՝ հիմնվելով բյուզանդական մոդելներին որպես նախնական հենակ: Բյուզանդական նամակագրությունում հաճախ էին կատարվում բարձր մակարդակի կրթություն պահանջող հղումներ այլ տեքստերի, որպիսզի նամակն ավելի հետաքրքիր եւ հաճելի լիներ ստացող/կարդացողի համար: Բացի այս տիպի գրական հղումների (որոնք բազմաթիվ են Մագիստրոսի «Թղթերում»), նա հաճախ անդրադառնում է նաեւ բժշկական թեմաների: Այս տիպի հղումներ ընդգրկված են կա՛մ, երբ խոսվում է նամակը գրողի եւ ստացողի առողջական վիճակի մասին, որը սպասելի է ցանկացած անձնական թղթագրության մեջ, կա՛մ բժշկական եւ մարմնակազմության վերաբերյալ բարձրագույն աստիճանի գիտելիքները ցուցադրելու համար, կա՛մ էլ որպես գրական հղում հայտնի բժշկական գրվածքների եւ հեղինակների (օրինակ՝ Հիպոկրատին):

Այս տեսակետից՝ Մագիստրոսի նամակները բացառություն չեն կազմում եւ պարունակում են այս երեք տիպի հղումները: Բժշկական հղումների ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս բացահայտել, թե ինչ բժշկական տեքստերից է օգտվել Գրիգոր Մագիստրոսը, ինչ տիպի բժշկական կրթություն ուներ նա, եւ որոշ չափով, թե ինչ մոտեցում է ցուցաբերում բժշկական գիտությանը: Մեր վերլուծությունները դեռեւս անկատար են, քանի որ շատ հատվածներ անհասկանալի են եւ կարող են տարբեր ձևի մեկնաբանվել: Չնայած սրան, կարելի է հանգել որոշ բավականին վստահելի եզրակացությունների:

\*\*\*

**Աննա Արեվշատյան**  
**Գրիգոր Մագիստրոսի Երաժշտա—Գեղագիտական Հայացքները**  
Anna Arevchatian – Les Conceptions Musico–Esthetiques De Grigor Magistros

Բազրատունյաց հարստության շրջանի հայ մատենագիրների շարքում կարևորագույն տեղ է զբաղեցնում Անիի մտավոր վերնախավի փայլուն ներկայացուցիչ՝ քաղաքական գործիչ, գորավար, գիտնական, մանկավարժ, բանաստեղծ եւ երգահան իշխան Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (980—1059): Նա թողել է հարուստ գրական ժառանգություն, որն առ այսօր շարունակում է գրավել ուսումնասիրողներին: Արդեն այն փաստը, որ Գրիգոր Մագիստրոսը հիշատակվում է շարականագիրների միջնադարյան

ցուցակներում, ինքնին ուշագրավ է: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա եղել է իր ժամանակի երևելի շարականագիր և տաղասաց: Այդ մասին են վկայում Շարակնոցում տեղ գտած և եկեղեցու կողմից կանոնակարգված նրա հինգ շարականները և Գանձարաններում առկա երկու տաղերը:

Սակայն առավել ուշագրավ են Գրիգոր Մագիստրոսի Թղթերում և Մեկնություն քերականիում արտացոլված նրա գեղագիտական, մասնավորապես երաժշտագեղագիտական հայացքները: Մագիստրոսի Թղթերում առկա մի շարք նամակներ ներկայացնում են հեղինակին հետաքրքրող գեղարվեստագեղագիտական հարցերի մի լայն շրջանակ: Այստեղ կարելի է հանդիպել և հոգևոր, և աշխարհիկ՝ գուսանական երաժշտարվեստին վերաբերող տեսակետների և գնահատականների, որոնք փաստում են ոչ միայն Գրիգոր Մագիստրոսի՝ այդ հարցերին քաջատեղյակ և խորամուխ լինելը, այլ նաև ընկալվում են իբրև այդ ժամանակաշրջանի գեղարվեստական-մշակութային կյանքի անցուդարձի կենդանի վկայություններ:

Թղթերում քիչ չեն անտիկ և հին հայկական դիցաբանությանը վերաբերող ասույթներ, այն ժամանակվա Հայաստանի խոշորագույն վարդապետարաններում՝ Անիում, Հաղպատում և Մանահնում տիրող մթնոլորտի և դասավանդվող ուսումնասիրական ծրագրերին վերաբերող արժեքավոր դիտարկումներ և դատողություններ: Կամ նկարագրում են մայրաքաղաք Անիի զանազան հանդիսություններ և արարողություններ, որոնց ժամանակ հնչում էր տարբեր ժանրերին պատկանող երաժշտությունը:

Մեկնություն քերականիում Մագիստրոսը մանրամասնորեն անդրադառնում է գուսանական երաժշտության առաջատար ժանրին՝ հագներգությանը, բազմակողմանիորեն բնորոշելով այն:

Մագիստրոսի երկերում հիշատակված երաժշտական ժանրերի անվանացանկը բավական ընդարձակ է. հոգևոր ժանրերից նա անդրադարձել է սաղմոսերգությանը, պատարագի երգասացություններին, իսկ աշխարհիկ երաժշտաբանաստեղծական տեսակներից հիշատակել է հագներգությունը, տաղը, ողբը, սոփնչը, մրմունջը և այլն:

Անհնար է պատկերացնել Գրիգոր Մագիստրոս Պահլավունու գործունեությունը առանց հայ-բյուզանդական մշակութային կապերին անդրադառնալու: Ստանալով փայլուն կրթություն Անիում և Կոստանդնուպոլսում, տիրապետելով մի շարք լեզուներին, նա եղել է մեկ կողմից՝ հայ իրականության մեջ չափազանց կարևոր դերակատարում ունեցած հունաբան դպրոցի ավանդույթների կրողը, մյուս կողմից՝ մարմնավորել է իր ժամանակի առաջադեմ հանրագիտակ մտավորականի մի նոր տեսակ, ում հայացքներում նշանակալի տեղ է գրավել երաժշտությունն ու արվեստը:

Այսպիսով, Գրիգոր Մագիստրոսը Անիի թագավորության շրջանում ձևավորված նոր տիպի մտավորական էր, երևելի գիտնական և արվեստագետ: Նրա վաստակն ու ներդրումը մասնավորապես ազգային երաժշտական մշակույթի մեջ դժվար է գերազնահատել: Նա նկատելի հետք է թողել ոչ միայն որպես շարականագիր և տաղասաց, երաժշտության գեղագետ, այլ նաև հեղինակ, ով իր Նամականիում անգնահատելի վկայություններ է թողել իրեն ժամանակակից երաժշտական կյանքի և մտավորականությանը հուզող այլևայլ գեղագիտական բնույթ կրող հարցերի վերաբերյալ:

\*\*\*

**Գրիգոր Բրուտեան**  
**Անանիա Շիրակունու «Քննիկոնն» ու դրա ճակատագիրը**  
Grigor Broutian – Anania Širakowni's *K'nnikon* and its destiny

Եօթերորդ դարի կեսերին Անաստաս կաթողիկոսի յանձնարարութեամբ Անանիա Շիրակունին ստեղծում է մի կոթողային երկ, որ կոչուել է «Քննիկոն»: Սա եղել է եօթ ազատ արուեստները ընդգրկող մի ծաւալուն ձեռնարկ, որ նախատեսուած է եղել իբրեւ դասագիրք Հայաստանի բարձրագոյն դպրոցների համար: Անանիայի «Քննիկոնում» ընդգրկուած են եղել երբեակ եւ քառեակ գիտութիւնները՝ քերթողական արուեստ (քերականութիւն), ճարտասանութիւն, տրամաբանութիւն, համարողութեան արուեստ, երկրաչափութիւն, երաժշտութիւն եւ աստղագիտութիւն: Ի տարբերութիւն ժամանակի ընդունուած դրուածքի, Քննիկոնով նախատեսուած է եղել ուսուցումը սկսել ոչ թէ՛ երբեակ գիտութիւններից, այլ համարողութեան արուեստից, մասնաւորապէս՝ թուաբանութիւնից: Նշեալ եօթ գիտութիւններից յետոյ Քննիկոնում եղել են նաեւ որոշ կիրառական գիտութիւններ: Մասնաւորապէս, եղել են տոմար, աշխարհագրութիւն, բժշկութիւն (հնարաւոր է, եղել են նաեւ այլ գիտութիւններ): Թէպէտ Քննիկոնն ամբողջութեամբ մեզ չի հասել, այդուհանդերձ դրա առանձին հատուածները հասել են մեզ, եւ այսօր հնարաւոր է բաւական լրիւ գաղափար կազմել այս կոթողային երկի նախնականի մասին:

Յատկապէս շատ ընդգրկուն է եղել Անանիայի Քննիկոնի մէջ «Տոմարը»: Սա բաղկացած է եղել տեսական եւ կիրառական մասերից: Տեսական մասում մանրամասն հիմնաւորուել են Հայաստանեայց Եկեղեցու այն սօնական իրողութիւնները, որոնք սկզբունքօրէն տարբերուել են այլ եկեղեցիների համապատասխան իրողութիւններից: Այդ մասի երկու մեծագոյն բեկորները մեզ են հասել իբրեւ առանձին շարադրանքներ՝ «Յայտնութեան ճառ» եւ «Զատկի ճառ» խորագրերով, որոնցում տրուած է Յայտնութիւնը Յունուարի 6-ին սօնելու եւ Զատիկը հայկական ձեւով հաշուելու մանրամասն տեսական հիմնաւորումը: Տոմարի կիրառական մասում ներկայացուած են եղել ժամանակի բոլոր 15 քրիստոնէայ ազգերի օրացոյցները, եղել է այդ օրացոյցներից մէկից միւսին անցնելու համար նախատեսուած «Խառնախորան» կոչուած աղիւսակը, ինչպէս նաեւ 580 - 1112 թթ. ընդրկող 532- ամեայ աղիւսակ (ՇԼԲ բոլորակ)՝ բոլոր ընդգրկուած տարիների գատիկների, որոշ այլ կարուոր սօների եւ հիմնական օրացուցային տուեալների մանրամասն ներկայացումով:

Անաստաս կաթողիկոսի վերահաս մահը խանգարում է Քննիկոնը իբրեւ պարտադիր դպրոցական դասագիրք վաւերացնելու գործին: Անաստասին յաջորդած գահակալներն էլ դէմ են լինում Անաստասի դպրոցական նորամուծութիւններին եւ այս ամենի հետեւանքով Քննիկոնը մօտ չորս դար ժամում է կաթողիկոսարանի դիւանում փակի տակ: Միայն ԺԱ դարում Գրիգոր Մագիստրոս Պահլաւունու ջանքերով եւ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի աջակցութեամբ Անանիայի այս կոթողային երկը բազմացում է եւ դրում կիրառութեան մէջ: Եւ Անանիայի Քննիկոնի վերստին կեանք մտնելով էլ պէտք է բացատրել ի յայտ գալը հայ բնագէտ-տոմարագէտների նոր փայլուն սերնդի, որի կարկառուն ներկայացուցիչներից գիտենք Յովհաննէս Կոզեռնը, Յովհաննէս Սարկաւազ վարդապետը, Սամուէլ Անեցին, Յակոբ Ղրիմեցին եւ այլք:

\*\*\*

**Բենեդետա Կոնտին**  
**Անանիա Շիրակացի որպես փիլիսոփայ**  
Benedetta Contin – Anania Sirakaci as a Philosopher

Այս զեկոյցով կը փափաքինք ներկայացնել Անանիա Շիրակացու փիլիսոփայական համակարգը, մանաւանդ այս կարեւոր հեղինակին ընդհանուր գիտաբանական եւ բնական տեսութիւնները, որոնք գլխաւորապէս կը գտնուին իր տիեզերագիտական աշխատութիւններուն մէջ: Անանիայի տեսութիւնները իւրայատուկ ձեւով կը պարունակեն բնական գիտութիւններուն եւ բնագանցութեան վերաբերող արիստոտելական եւ նորպղատոնական գաղափարներն ու կապաղովկացի սուրբ հայրերէն կատարուած մեկնաբանութիւնը յոյն իմաստասիրական յղացքներուն վրայ:

Անանիայի տիեզերագիտական երկասիրութիւններուն մէջ կը գտնուին Արսիտոտելի օդերեւութաբանական եւ Ֆիսիքական երկերուն ազդեցութեան բազմաթիւ նմոյշներ, ինչպէս օր. այն պրակները ուր մեծ գիտնականը կը խօսի Կաթնածիրին կամ տիեզերքի եօթ ոլորտներուն մասին: Ասով հանդերձ, կը փափաքինք ակնարկել Շահրակացու ճանաչողական եւ իմացական տեսութեան, մանաւանդ վերաքննելով Հայ փիլիսոփայութեան մտքի պատմութեան մէջ Հենրիկ Գաբրիելեանի ցուցաբերած կարծիքները (Երեւան 1956, Բ. հրատար.՝ 1976), որոնք բաւական կարեւոր եւ յարատեւ ազդեցութիւն ունեցան հայ փիլիսոփայութեան պատմութեան ուսուցման մէջ:

Յոյժ հետաքրքրական է մեր գիտնականին մարդաբանական գաղափարախօսութիւնը, մանաւանդ երբ կը յայտնէ նախախնամութեան վերաբերող իր կարծիքը որ անկասկած կախում ունի յոյն սուրբ հայրերէն եւ նաեւ Եզնիկ Կողբացու «Ընդդէմ աղանդոց» տեքստի մէջ գտնուող տեսութիւններուն:

\*\*\*

**Արմենուհի Գոռոտ-Աբգարյան**  
**Անանիա Շիրակացին որպէս շարականագիր**  
Armenuhi Drost-Abgarjan – Anania Sirakaci as a Hymnographer

Անանիա Շիրակացին գիտական աշխարհին և հասարակայնությանն առավելաբար հայտնի է որպէս տոմարագետ, աշխարհագրագետ, մաթեմատիկոս և բնագետ: Նիկողայոս Թահմիզյանի ուսուսմասիրությունների շնորհիվ բացահայտվեց նրա վաստակը նաև երաժշտագիտության ասպարեզում: Գրեթե անհայտ է մնում բազմաշնորհ մտավորականի դիմանկարը որպէս հոգևոր բանաստեղծությունների հեղինակի և շարականագրի: Գուցէ նաև այն պատճառով, որ նրան վերագրվող շարականների իսկությունն ու հեղինակային պատկանելությունը դեռևս վավերացված չեն:

Ընդհանրապէս շարականագիրների ձեռագրերում և տպագիր Շարակնոցներում ավանդված ցանկերը հաճախ միևնույն հոգևոր երգերը վերագրում են տարբեր հեղինակների և հայ եկեղեցու հայրերի: Երբեմն հանդիպում են նույնիսկ կրկնակի և եռակի վերագրումներ: Ուստի կարելի է ենթադրել, որ հավանաբար հատկապէս Եկեղեցու Տաղավար տոներին նվիրված շարականները ոչ թէ անհատական հեղինակների գրչի արդյունք են, այլ դարերի ընթացքում ձևավորված և բանավոր կերպով փոխանցված բանաստեղծական շերտավորումներ, որոնք գրավոր խմբագրությունների հետքեր են կրում: Այդպիսի խմբագրումներ տեղի են ունեցել

Անանիա Շիրակացու ապրած ժամանակաշրջանում, 7-րդ դարում («Ճոնընտիր»), այնուհետև Ստեփանոս Սյունեցու (8-րդ դ.), Ներսես Շնորհալու (12-րդ դ.) և Գրիգոր Խուլի (13-րդ դ.), օրոք:

Ամենավաղ նախաշնորհալիական խմբագրությունը վերագրվում է Շիրակացու ժամանակակից, Շիրակի Դպրեվանքի վանահայր Բարսեղ Ճոնին, հայկական ծիսերգության մեջ բյուզանդական օրհներգային կանոնակարգի ներմուծումից առաջ:

Վերոհիշյալ ենթադրությունը ստուգելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել Անանիա Շիրակացու անվամբ «Շարակնոցում» ամփոփված բանաստեղծական ժառանգությունը՝ ժամանակի շարականերգության, աստվածաբանական հայացքների և պատմական իրադարձությունների համատեքստում:

Հոգևոր երգերի այս կանոնական ժողովածուում Շիրակացուն են վերագրվում Հինանց շրջանի Հարության ութձայն հարցնակարգերը, որոշ ցանկերում նաև Հոգեգալստյան ու Վարդավառի առաջին օրերի, ինչպես նաև Մարգարեներին, Հովհաննես Մկրտչին, առաքյալներին, Սուրբ Անտոն Անապատականին, Հայրապետներին, Սուրբ Գրիգոր Լուսավորչին, ապաշխարության և մարտիրոսներին նվիրված, ինչպես նաև «Թագաւորաց» շարականները:

Բացի Անանիա Շիրակացու և Բարսեղ Ճոնի անվամբ ավանդված ծիսերգերից Շարակնոցում ընդգրկված են նաև նույն դարի հեղինակներ Կոմիտաս Ա. Աղեցուն («Անձինք նուիրեալք») և Սահակ Ձորափորեցուն (Սուրբ Խաչի և Եկեղեցու երգաշարեր) վերագրվող շարականներ:

Հեղինակության հարցը պարզելու համար ուսումնասիրության են ենթարկվում Անանիա Շիրակացու եկեղեցական հնագույն տոներին՝ Աստվածահայտնությանը և Զատկի նվիրված ճառերում արտահայտված աստվածաբանական հայացքներն ու լեզվական առանձնահատկությունները:

Ըստ Շիրակացու, յուրաքանչյուր բարեպաշտ քրիստոնյա պարտավոր է տոներու Աստվածահայտնության, Զատկի և Հոգեգալստյան տոները. «զկոչումն մկրտութեանն ի սուրբ յայտնութեան ծննդեան տեառն, և փրկական զատկի կենարար չարչարանացն քրիստոսի և ի շնորհալից պենտեկոստեին, յորում աստուածային էջք հոգւոյն կենդանարարի ի մեզ ծաւալեցան» (Անանիա Շիրակայնոյ Համարողի ասացեալ ի Յայտնութիւն Տեառն և Փրկչին մերոյ, Անանիայի Շիրակունոյ Մնացորդք բանից, Ս. Պետերբուրգ 1877, 4):

Ուշագրավ է, որ այս երեք տոներին նվիրված հոգևոր երգերը հաճախ վերագրվում են կամ Անանիա Շիրակացուն, կամ Մովսես Խորենացուն, որն հիմնականում Աստվածահայտնության շարականների հեղինակ է համարվում, իսկ խորհրդանշական բովանդակությամբ Զատկի և Հարության տոներին հարող Խաչի և Եկեղեցու շարականները մերթ Սահակ Ձորափորեցուն, մերթ Սահակ Պարթևին: Սա կարող է հանգեցնել այն մտքին, որ 7-րդ դարում նշվող այս երեք տոների հիմնական երգացանկը սերում է հայ ծիսերգության սկզբնավորման ժամանակաշրջանից (5-րդ դար)՝ վերանայվելով և խմբագրվելով Շիրակի դպրոցի ներկայացուցիչների կողմից:

Զեկուցման մեջ նախ փորձ է արվում տեքստերի գրականագիտական վերլուծության հիման վրա լրացուցիչ կովաններ երևան հանել այս կամ այն վերագրումը հիմնավորելու կամ հերքելու համար:

Ձուգահեռներ են անցկացվում նաև ժամանակի բյուզանդական և նախաշնորհալիական հայկական օրհներգային արվեստի գեղարվեստական արտահայտչամիջոցների, ինչպես նաև ժանրային ու կառուցվածքային յուրահատկությունների միջև:

\*\*\*

### **Գոհար Մուրադյան**

**Գրիգոր Մագիստրոսի ընթերցած գիտական և այլ երկերը**  
Gohar Muradian – Scientific and other Works Read by Grigor Magistros

Գրիգոր Մագիստրոսի նամակները ոչ միայն իր ժամանակի իրադարձություններն արտացոլող վավերագրեր են, այլև գրական ստեղծագործություններ: Ուստի զարմանալի չէ, որ դրանք լի են հայտնի և անհայտ աղբյուրներից մեջբերումներով ու վերապատումներով, որոնք նրա ընթերցանության շրջանակի վկայությունն են: Ամենից շատ են զուգահեռները Աստվածաշնչի հետ: Հաճախ Գրիգորը նշում է իր տեղեկությունների աղբյուրը, օրինակ՝ Մատթևոսի Ավետարանը, Ամբակումի և Եզեկիելի գրքերը, իսկ Մաղմուսներից մեջբերելիս տալիս է Դավթի անունը: «Մեր Մովսես»-ը Խորենացին է, հիշատակում է նաև նրա Ողբը: Խոսում է Անանիա Նարեկացու հատվածաբար պահպանված հակաթոնդրակեցիական գրվածքի և Եպիփան Կիպրացու *Պարունակաց*-ի (*Panarion* կամ *Adversus haereses*-ի թարգմանությունն է՝ անտիպ) մասին:

Թղթերում հանդիպում ենք նաև հետևյալ հեղինակների և վերնագրերի՝ Ագաթանգեղոս, Աբիդենոս և Բիւռռոս (Բերոսոսն է, երկուսն էլ՝ Խորենացու միջնորդությամբ), Պլատոնի *Տիմոն*, Սեղբեստրոս, Գրիգոր Նյուսացու «Գագմութեանն եւ զԲնութեանն» (իրականում *Յաղագս բնութեան մարդոյ*-ի հեղինակը՝ Նեմեսիոս Եմեսացին է), Հերմէս Եռամեծ (երեք անգամ), Հիպոկրատես (հինգ անգամ) և այլ բժիշկներ, մաթեմատիկոս Նիկոմաքոս (60-120 թթ., նորայլութագորական), Թեոն Ալեքսանդրացու (մ.թ. 1-ին դար) ճարտասանական նախակրթությունները՝ «Թոփսեան արհեստն հռետորական», Փիլոն Ալեքսանդրացի, որը «հրէայ էր եւ ոչ քրիստոնէայ», Հակոբ Մծբնեցի, Կյուրեղ Ալեքսանդրացի, Բարսեղ Կեսարացի:

Հիշատակում է ճայի առակը՝ «գարեն ճային Ոլումպիանեայ» (Եզովպոսի հայերեն թարգմանված առակները վերագրված են ոմն Օլիմպիանոսի), պատմում է առյուծի ու ճանճի մասին այլուր չվկայված մի առակ:

Երբեմն գրում է, որ այս կամ այն բանը «ի գոեհիկս ասեն», կամ «պատմի», կամ «աւանդեալ գտաք»:

Մագիստրոսն անշուշտ ծանոթ է Արիստոտելի *Ստորոգությունների*, այդ երկի՝ Պորփյուրիոսի *Ներածության* և վերջինիս Դավիթ Անհաղթի մեկնության հայերեն թարգմանություններին:

Անանիա Շիրակացու կորսված «Մեծ Քննիկոն» երկի մասին ավելի մանրամասն է խոսում, ներկայացնելով բովանդակությունը, աղբյուրները և դերը կրթական համակարգում:

Գրիգոր Մագիստրոսի գրվածքներում հատուկ տեղ են գրավում հույն հեղինակների հիշատակումները, մեջբերումները նրանցից, անտիկ առասպելական ու գրական դրվագների կապակցված վերապատումները կամ սուկ ակնարկումները: Նման պլոմեների մի մասը նա քաղել է հայ հին թարգմանություններից՝ Դավիթ Անհաղթից,

կիսաթարգմանական *Պիտոյից գրքից, Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ* երկից, կեղծ-Նոննոսի՝ Գրիգոր Նազիանզացոյ ճառերում հիշատակվող անտիկ առասպելների մեկնությունից, Եվսեբիոս Կեսարացոյ *Քրոնիկոնից*, Թեոնի ճարտասանական վարժություններից: Գրիգորը դիմել է նաև հույն հեղինակների բնագրերին. գուգահեռներ կան Եվսեբիոս Կեսարացոյ, Դիոգենես Լաերտիոսի, Լիբանիոսի, Հումերոսի մեկնիչ Եվստաթիոսի, Դիոդորոս Սիկիլիացոյ, Ապոլոդորոսի, Սվիդասի և ուրիշների հետ, նաև հավանաբար միջնորդավորված՝ Հերոդոտոսի, Պավսանիասի, Պլուտարքոսի հետ: Հատկապես նշանակալի են գուգահեռները, երբեմն էլ բառացի քաղվածքները քրիստոնեության ջատագով Կղեմես Աղեքսանդրացոյ (150-211/215) «Խրատ հեթանոսներին» երկից: Դրանց թվում կա մի բացառիկ և որևէ այլ աղբյուրում չավանդված սյուժե՝ Դիոնիսոս աստծո տիտաններից պատառոտվելու պատմությունը:

Նամակներում դեռևս ժամանակ էն մի շարք հանելուկներ՝ այնպիսի առասպելական կամ առասպելանման դրվագներ, որոնց աղբյուրը կա՛մ գոյություն չունի, կա՛մ չի պահպանվել, կա՛մ էլ մեզ չի հաջողվել այն գտնել:

\*\*\*

**Ալեքսանդրո Օրենգո**  
**Անանիա Շիրակացոյ «Ինքնակենսագրությանը»**  
Alessandro Orengo – *L'Autobiographie d'Anania Širakac'i*

Ինքնակենսագրությունն այն գրական ժանրերից է, որը լայն ճանաչում եւ գործածություն գտավ քրիստոնյա հեղինակների շրջանակներում եւ որի վաղագույն հունարեն եւ լատիներեն նմուշները վերագրվում են քրիստոնեության առաջին դարերին: Բավական է հիշել Գրիգոր Նազիանզացոյն, որի ինքնակենսագրությունը դեռ իր վրա է կրում հեթանոսական նախատիպերի ազդեցությունը, կամ Ավգուստինոսին, որը, հակառակ Նազիանզացոյ, նոր մոտեցում ցուցաբերեց այս ժանրին, պայմանավորված նրանով, որ ժանրի այնպիսի ավանդական տարրեր ինչպիսիք են ինքնապաշտպանությունը կամ հակառակորդին ուղղված մեղադրանքը, Ավգուստինոսի մոտ փոխարինվեցին հեղինակի իսկ մեղքերը ճանաչելու մղումով: Այս ժամանակաշրջանում գրված ինքնակենսագրություններում հեղինակի՝ հավատափոխությունից առաջ գործած, մեղքերի ճանաչումը հանդիսանում է գրական տեղի:

Հայկական իրականության մեջ, չնայած հայ մշակույթի վրա հունականի թողած խոր ազդեցությանը, գրերի ստեղծումից մի քանի դար անց էլ դեռ ինքնակենսագրության ժանրը տարածված չէր: Բհարկե, մի քանի ստեղծագործություններում հիշվում են դրանց իրական կամ մտացածին հեղինակները, օրինակ՝ Կորյունի, Ագաթանգեղոսի, Եղիշեի եւ Մովսես Խորենացոյ մոտ: Սակայն այդպիսի տեղեկությունները սահմանափակվում են հեղինակի՝ տվյալ գործը ձեռնարկելու շարժառիթները պարզաբանելով, կամ էլ հաստատում են, որ գրողն ականատես է եղել նկարագրվող այս կամ այն իրադարձությանը: Միակ մասնակի բացառությունն է հանդիսանում Ղազար Փարպեցին, ոչ թե իր «Հայոց պատմության», այլ Վահան Մամիկոնեանին ուղղված նամակի շնորհիվ:

Այս է հայ գրականության մեջ ինքնակենսագրության ժանրին վերաբերող պատկերն՝ իր առաջին երկու դարերի ընթացքում: Այժմ անցնենք Անանիա Շիրակացու «Ինքնակենսագրությանը», որպես այս ժանրի առաջին հայկական նմուշին:

Այս տեքստը, որի վերնագիրն, ինչպես հայտնի է, վերագրվում է ժամանակակից բանասերներին, մեզ է հասել երկու տարբերակով. սեղմ տարբերակը մի ավելի վաղ տեքստի, որը հազիվ թե ինքնագիրը լիներ, կարճ խմբագրությունն է, մինչդեռ երկար տարբերակն ավելի մոտ է ինքնագրին: Հնարավոր է նաև, որ այն «Քննիկոնի» ներածությունը լիներ, Անանիայի կողմից շարադրված այդ վիթխարի աշխատության, որն ամփոփել էլ ի մի էր բերել ժամանակակից գիտությունների նվաճումները: «Քննիկոնի» ձեռագրային արտագրությունները դժվարին մի աշատանք էին հանդիսանում ո՛չ միայն նրա ծավալի, բայց նաև գրիչից պահանջվող գիտական բարձր մակարդակի պատճառով: Համենայն դեպս, հավանական է, որ այս ծավալուն գործի գոնե մեկ ձեռագիր դեռ գոյություն ուներ Գրիգոր Մագիստրոսի ապրած ժամանակաշրջանում:

Անանիա Շիրակացու «Ինքնակենսագրությունը» մեզ է տրամադրում մի շարք տեղեկություններ. նախ, հեղինակի մասին, ներառյալ նրա ծննդյան վայրի, ճամփորդությունների, կրթության եւ, հետագայում, կրթական աշխատանքի մասին: Բացի դրանից, այն մեզ տեղեկացնում է ժամանակակից հայ եւ հունական մշակույթների, հատկապես ճշգրիտ գիտությունների ոլորտում լավ ուսուցիչներ գտնելու հետ կապված դժվարությունների եւ ոչ որակյալ, սահմանափակ գիտելիքներով, բայց անչափ ինքնավստահ եւ ինքնահավան, ուսուցիչների մասին: Այս առումով, «Ինքնակենսագրությունը», չնայած նրա կողմնակալությանը, հանդիսանում է մի կարեւոր փաստաթուղթ VI-VII դդ. ո՛չ միայն հայկական, այլ նաև բյուզանդական մշակութային իրավիճակի վերաբերյալ պատկերացումներ կազմելու համար:

\*\*\*

### **Հանլետ Պետրոսյան**

#### **Մաթեմատիկան և խնջույքը. Անանիա Շիրակացու «Խրախճանականքը»**

Hamlet Petrosyan – Mathematics and the feast: The *Xraxćanakank*<sup>1</sup> of Anania Širakac<sup>1</sup>

Անանիա Շիրակացու «Խրախճանականքը» թվաբանական խնդիրների մի փոքրիկ ժողովածու է (առայժմ վստահորեն կարելի է խոսել վեց խրախճանականի մասին), որոնց միավորում է խնջույքի թեման: Շիրակացին դրանք անվանում է խրախճանականք և հորդորում առաջարկել սեղանակցին գինարբուքի ժամանակ, եթե «ցանկանում ես զվարճալի և ծիծաղելի բաներ ասել»:

Խրախճանականների երրորդն ունի բացթողումներ, որի պատճառով թվաբանական մասը հասկանալի չէ, երեքը թվային հաշվարկի վրա հիմնված խաղեր են, իսկ երկուսը Շիրակացու թվաբանական խնդիրներից չտարբերվող խնդիրներ են, լրացված «խնջույքային» առաջաբանով և վերջաբանով: Խնդիրն ուղղվում է մեկին, ում նա անվանում է ընկեր, և պատասխանն էլ սպասվում է նրանից: Նկատի ունենալով խնջույքային միջավայրը, հավանական է, որ ընկեր բառն օգտագործվում է իր նախնական «միասին ուտող, հացակից, ճաշակից» իմաստով: Խրախճանականների վերջաբանները պատկերում են այն բերկրանքը, որ պիտի ստանա հարց տվողը մրցակցի պարտության դեպքում: Այսպիսով, խրախճանականներն՝ ի տարբերություն



այլ թվաբանական խնդիրների, ուղեկցվում են հատուկ հրահանգ-խորհուրդներով՝ երբ, որտեղ և ինչպես դրանք օգտագործել, ինչպիսի պահվածք դրսևորել: Բնութագրական է, որ երեք խրախճանականի զուտ թվաբանական մասն էլ կազմված է խնջույքի և գինու թեմայով, ինչը հնարավոր է դարձնում որոշակի պատկերացում կազմել խնջույքի մթնոլորտի մասին:

Այս ամենով հանդերձ, խրախճանակների բուն ատաղձը թվաբանական է, չկան հանելուկային-այլաբանական կամ զուտ տրամաբանական-փիլիսոփայական ձևակերպումներ, դրանցից երկուսն իրենց բարդությամբ չեն զիջում Շիրակացու զուտ թվաբանական խնդիրներին և պիտի որ լուրջ դժվարություններ հարուցեն նույնիսկ զգոն վիճակում լուծել փորձելու դեպքում:

«Խրախճանականքի» թեմաների միջնադարյան խնջույքի համադիր քննությամբ կարելի է հավաստել, որ Շիրակացին մաթեմատիկական գիտելիքը Հայաստանում տարածելու նպատակով պլատոնյան սիմպոզիումի սկզբունքը, որին նա ակնհայտորեն քաջաձանթ է եղել, ձևափոխել-լրացրել է հայկական խնջույքի մանրամասներով՝ տալով իր խնդիրներին խնջույքային անուն և արտաքին:

Մատենագրական, հնագիտական և պատկերագրական մի շարք տվյալների ներառումը (արքայական և իշխանական խնջույքների նկարագրություններ, գինարբուքին օգտագործվող կարասների դրոշմագարդ գոտիներ, հանգուցյալների խնջույքը պատկերող տապանաքարային քանդակներ) ու քննությունը հնարավոր են դարձնում վերականգնել միջնադարյան խնջույքային միջավայրը և հավաստել, որ միջնադարի հայ ինտելեկտը հոգևոր-բարոյական գաղափարների տարածման նպատակով փորձել է «նորամուծությունները» համադրել ժողովրդական աշխարհընկալման, սովորույթների և ծեսերի հետ, ինչն էլ, ինչպես և Շիրակացու «Խրախճանականքի» դեպքում է, այդ նախաձեռնություններին հաղորդել է առանձնահատուկ կերպավորում և ընթացակարգ:

\*\*\*

## Զարա Պոգոսյան

### Սրբերի պաշտամունքը միջնադարյան Շիրակում եւ Անանիա Շիրակացու

#### «Հաղագս հարցման եւ լուծման» որպես աղբյուր

Zara Pogossian – The Cult of Saints in Medieval Şirak and the *Mathematical Problems* of Anania Şirakac‘i as a Source

Անանիա Շիրակացու «Հաղագս հարցման եւ լուծման» աշխատության նշանակությունը որպես պատմական աղբյուր՝ ընդունված փաստ է գիտական համայնության կողմից: Այս առումով, այն կարելու է Սբ. Սարգսի պաշտամունքը հովանավորող Սահակ Կամսարականի մասին հետաքրքիր տեղեկություններ ձեռք բերելու համար:

Սբ. Սարգսի պաշտամունքի տարածման ուսումնասիրության համար կարելու է նյութական աղբյուր է հանդիսանում հայատառ ամենավաղ արձանագրություններից մեկը՝ գրված Տեկորի եկեղեցու արեւմտյան մուտքի բարավորի ներքեւի մասում: Այնտեղ, որպես Սբ. Սարգսի վկայարանի հիմնադիր, հանդիսանում է Մ. իշխան Սահակ Կամսարականը: Թվում է, թե հենց այս Սահակ Կամսարականն էր Սբ. Սարգսի պաշտամունքի հովանավորն ու հենակը, եւ նրա շնորհիվ է, որ նախքան Ներսէս Շնորհալու կողմից 1158թ. Սբ. Սարգսի «Վարքի» թարգմանությունը, սրբի պաշտամունքն

առավել տարածված էր պատմական Հայաստանի հենց այս հյուսիսային նահանգում՝ Շիրակում: Մինչդեռ Մբ. Սարգսի պաշտամունքը բուն զարգացում ապրեց եւ էլ ավելի տարածվեց Շնորհալու թարգմանությունից հետո ամբողջ պատմական Հայաստանում, եւ վերջինիս հետքերն առավել ակնհայտ են աղբյուրներում, հետազոտողները ցայժմ քիչ ուշադրություն են դարձրել պաշտամունքի ակունքներին, դրանց խթանող իշխանական տան անդամներին եւ պաշտամունքի տարածման ընթացքի ամենավաղ շրջանին: Այս առումով, Անանիա Շիրակացու «Հաղագս հարցման եւ լուծման» աշխատանքը կարող է լրացնել մեր գիտելիքները Սահակ Կամսարականի վերաբերյալ:

Ասենք, որ Սահակ անունը բավականին տարածված էր Կամսարական նախարարական տան անդամների շրջանականներում, ամենայն հավանականությամբ Մամիկոնյանների հետ ունեցած խնամակերպ կապերի շնորհիվ: Տեկորի եկեղեցու հիմնադիր Սահակ Կամսարականը նշված է նաեւ Ղազար Փարպեցու «Պատմություն հայոց»-ում: Չնայած Սահակի ավագ տարիքին (նա երեք եղբայրներից ամենամեծն էր, միջինը՝ Ներսեհ, եւ կրտսերը՝ Հրահատ), Փարպեցու մոտ նա նշվում է հարեւանցի, հաճախ նույնիսկ անտեսվում է այնպիսի համատեքստերում, որտեղ դա բավականին տարօրինակ տպավորություն է թողնում: Բացառված չի, որ Ղազար Փարպեցու այս վերաբերմունքը պայմանավարձված էր միջ-ընտանեկան հարաբերությունների մասին իր ունեցած անձանական գիտելիքներով: Հիշենք, որ Փարպեցին մեծացել էր Կամսարական եղբայրների հետ:

Երկու դար անց, այս վերաբերմունքը դեռ չէր մոռացված: Այսպես, Անանիա Շիրակացու ԻՍ Հարցումն անդրադառնում է Ներսեհ Կամսարականի ռազմական հաջողություններին եւ, պատերազմի ավարտից հետո, իր կողմից վերցված գերիների եւ ավարի բաժանմանը: Ինչքան էլ տարօրինակ թվա, Ներսեհն իր կրտսեր եղբորը՝ Հրահատին, շատ ավելի մեծ քանակով ընծաներ է մատուցում, քան ավագ եղբորը՝ Սահակին, որը նշված է հարցման ամենավերջում, նույնիսկ «ազատք հայոցից» հետո: Ավելին, մինչդեռ Ներսեհն ընծաները բաժանելու նպատակով ճամփորդում է տարբեր բարձրապաշտոն անձանց բնակավայրերը, այս դեպքում Սահակն ինքն է գալիս Ներսեհի մոտ: Հաշվի առնելով Ղազար Փարպեցու վկայությունը, շատ հավանական է, որ Անանիան Շիրակացին եւս տեղյակ էր Կամսարական տան մանրամասն պատմությանը եւ ապագային է փոխանցել միջ-ընտանեկան թերեւս ոչ այնքան հաճելի մանրամասների արձագանքը: Արդյոք այս դժվարությունները չէի՞ն, որ պարտադրեցին Սահակ Կամսարականին իր դիրքն ամրապնդել այլ ճանապարհներով, քան ռազմական հաջողություններին, եւ ակտիվ կերպով իրացնել եկեղեցական քաղաքականություն, ներառյալ նոր սրբերի պաշտամունքների մուտքն ու հովանավորումը պատմական Հայաստանի Շիրակ գավառում:

\*\*\*

### **Էռնա Մանեա Շիրինյան**

#### **Գիտությունների ուսումնասիրությունն ու ուսումնառությունն Անանիա Շիրակացու ժամանակներում**

Erna Manea Shirinian – The Study of Sciences at the Time of Anania Širakac‘i

Դրույթներ. Է դարում, Հայաստանում և այլուր Անանիա Շիրակացու *Վասն որպիսութեան կենաց իւրոց* երկը որպես կարևորագույն աղբյուր գիտությունների

ուսումնասիրությունն ու ուսումնաստությունն հետազոտելու համար: Անանիա Շիրակացու դերը հայկական դպրոցի (բառիս լայն իմաստով) զարգացման գործում. կրթական ծրագրեր, «եռյակ» և մասնավորապես «քառյակ» (թվաբանություն, երկրաչափություն, աստղագիտություն և երաժշտություն) ազատ գիտությունների առավել խորը ներգրավում, բացառիկ և եզակի (և ոչ միայն Հայաստանի համար) դասագրքեր, մանկավարժական յուրահատուկ մոտեցումներ, որոնք մանրամասն նկարագրել և պարզաբանել է հենց Անանիան (մասնավորապես երեխաներին թվաբանություն ուսուցանելու իր ուրույն եղանակը), դպրոցական ստույգ տարիքի որոշման հարցի վերաբերյալ տեղեկություններ և այդ տարիքի գիտական ու մանկավարժական հիմնավորումը նրա կողմից:

Հատուկ ուշադրության են արժանի Անանիա Շիրակացու գրվածքները և զանազան գիտությունների շաղկապվածությունը նրա գործունեության մեջ՝ ոչ միայն «համարող», այլև պատմաբան, ոչ միայն աշխարհիբագետ, այլև մանկավարժ, ոչ միայն աստղագետ, այլև աստվածաբան, ոչ միայն տոմարագետ, այլև փիլիսոփա: Այս շարքից թերևս ամենասակավ ուսումնասիրված թեմաներն են՝ Անանիա Շիրակացու ներդրումը որպես փիլիսոփայի և աստվածաբանի: Փիլիսոփայության առումով մասնավորապես հետաքրքրական է անտիկ շրջանից սերող (Հերակլիտես) «հակադրությունների միասնություն» տեսության Անանիա Շիրակացու իմացությունը և կիրառությունն իր աշխարհընկալման մեջ: Ինչ վերաբերում է աստվածաբանությանը՝ ապա կարելի է ասել, որ գրեթե չկան Անանիա Շիրակացու գործերի աստվածաբանական խնդիրները քննարկող կամ վերլուծող ուսումնասիրություններ: Մինչդեռ հենց Անանիա Շիրակացին է, որ անդրադառնալով է այնքան կարևոր մի հարցի, ինչպիսին է Աստվածաշնչի հայկական կանոնը, որը՝ ներառելով և՛ «նախականոն», և՛ «երկրորդականոն», և՛ «անկանոն» գրքերը բավականին տարբերվում է մեզանում այսօր ընդունվածից: Ուշագրավ է նաև, որ աստվածաբանական երկերի նրա մեկնություններն արված են տոմարագիտության տեսանկյունից:

Առանձին քննության կարիք ունեն Անանիա Շիրակացու մեզ հասած գրվածքների վերնագրերի պարզաբանումը (մասնավորապես «Քննիկոն»-«Քրոնիկոն» հարաբերակցությունը) և այդ երկերի ընդգրկվելու սկզբունքը տարբեր ժողովածուների մեջ:

Շնորհիվ Անանիա Շիրակացու՝ Չ-է դարերում հայոց ինքնուրույն ու թարգմանական գրականությունն ավելի հարստացավ նոր գիտելիքներով՝ բնական գիտությունների, թվաբանության, աշխարհագրության, պատմության, քերականության, փիլիսոփայության և աստվածաբանության բնագավառերում: Հենց նա էր, որ որդեգրեց նոր՝ ժամանակի համար առաջատար մոտեցումներ և հետաքրքրություններ, որոնցում զուգորդված էին թե՛ հոգևորը և թե՛ աշխարհիկը, և որոնք, թերևս կարելի է ասել, ապահովեցին գիտությունների ուսումնասիրության ու ուսումնաստության շարունակականությունը Հայաստանում:

\*\*\*

**Էդդա Վարդանյան**  
**Հոռոմոսի վանքի ժամատան (1038) ճարտարապետական և պատկերագրական**  
**խորհրդաբանությունը և Անանիա Շիրակացու աստվածաբանական երկերը**

Edda Vardanyan – Le symbolisme dans l’architecture et l’iconographie du *Zamatown* du monastère de Hořomos (1038) et les écrits théologiques d’Anania Širakac’i

1038 թ. Հոռոմոսի վանքում, Սուրբ Հովհաննես Եկեղեցու հետ մեկտեղ, Անիի թագավորության արքա Յովհաննես-Սմբատը կառուցեց «Ժամատուն» անունը կրող շինություն. ուղղանկյուն հատակագծով, կենտրոնակազմ, չորս կենտրոնական պուներով և ութանիստ գմբեթով մի սրահ: Ժամատունը կերտվել է որպես թագավորական դամբարան: Նրա հորինվածքը դարձավ XI-XIII դարերի վանական համալիրներում ընդգրկված տոհմական տապանատների (հայտնի «Ժամատուն» կամ «գավիթ» անվանումներով) հիմնական ձևը:

Հոռոմոսի վանքի ժամատան հորինվածքը և նրա ճարտարապետական խորհրդաբանության ողջ համալիրը վկայում են նրա թաղումային և մեմորյալ գործառույթների մասին: Գարտարապետական նորարարական ձևերի մշակումը հպատակված է վախճանաբանական համատեքստին: Ինչպես հայտնի է, քրիստոնեական միջնադարյան մեմորյալ կառույցների ճարտարապետությունը ազդված է վաղքրիստոնեական վկայարանների և մկրտարանների կառուցվածքային կերպարից: Վերջինների ճարտարապետա-արտահատչական սխեմայում միավորված էին մկրտության և հարության գաղափարները, համաձայն նորկտակարանային այն թեզի, որ Քրիստոսի Հարությունը հնարավոր է դարձնում քրիստոնյայի հարությունը մկրտության միջոցով, մինչդեռ մկրտությունը հոգու նոր ծնունդ է (Թուղթ առ Հռուսեացիս VI : 3-4): Հոռոմոսի ժամատանը, այդ կոնցեպցիայի կարևորագույն տարրերից մեկը ութ մոնոլիտ սալաքարերից կազմված գմբեթն է: Աստվածաշնչում, և այնուհետև Եկեղեցու հայրերի մոտ, ութ թիվը հարության, վերածննդի և նորոգման խորհրդանիշ է: Այդ խորհրդաբանության համաձայն, վաղքրիստոնեական մկրտության ավազանները (վայրը որտեղ մեղքերի միստիկ մահով ծնվում է նոր կյանքը և ապագա հարության հույսը) ութանկուն են, իսկ մկրտությունը անվանվում է «վերածնունդ հոգևոր ութնյակում»:

Մկրտության խորհրդի և Քրիստոսի մահվան և հարության կապի մասին գրել են Եկեղեցու հայրերից շատերը: Հայաստանում, առաջիններից մեկը եղավ Անանիա Շիրակացին, իր՝ «Ի Յայտնութիւն Տեառն» ճառում: Այստեղ, Աստվածահայտնության տոնի առիթով, Անանիան քննում է Քրիստոսի Մկրտության խորհուրդը՝ Հարության խորհուրդի լույսի ներքո: Մահը, հարությունը և մկրտությունը սերտորեն կապված են, քանի որ մահը հարության սկիզբն է, իսկ մկրտությունը՝ հին կյանքի ավարտը և նոր կյանքի սկիզբը: Շիրակացին գրում է, որ մկրտության ավազանի մեջ երեք անգամ ընկղմվելը խորհրդանշում է Քրիստոսի՝ երեք օր գերեզմանում մնալը. ավազանը մկրտվողի և՛ գերեզմանն է, և՛ նոր կյանքի աղբյուրը, և՛ անմահության երաշխիքը:

Այդ նույն գաղափարը դրված է Հոռոմոսի ժամատան ութանիստ գմբեթի և վերջինի շքեղ հարթաքանդակների գաղափարային հիմքում: Այն արտահայտում է Քրիստոսի Երկրորդ Գալստյան և Երկնային Երուսաղեմի հաստատման գաղափարը: Ութանիստ գմբեթը կրում է ոչ միայն «Տիրոջ Ութերորդ օրվա», խորհուրդը (Քրիստոսի

հարության և միաժամանակ նրա Երկրորդ գալստյան օրը), այլև արտահայտում է ժամանակի արարչագործության քրիստոսաբանական-ծիսական խորհուրդը, որի մեկնությունը կա նաև Անանիա Շիրակացու աշխատություններում, մասնավորապես նրա՝ Տոմարին նվիրված պատառիկում:

Ուշագրավ է ժամատան քանդակային հարդարանքի մեկ այլ առանձնահատկություն: Երկնային Երուսաղեմի եզրի մարմնավորմանն են կոչված նաև գմբեթի՝ օրնամենտով հարդարված սալաքարերը, որոնց հիմնական մոտիվը սվաստիկան է: Սվաստիկան երկնային լուսատուների հիմնական նշանակն է: «Արևային խաչ» անվանվող այդ մոտիվը միանգամայն տեղին է թաղումային գործառույթ ունեցող ժամատանը, քանի որ լուսատուների պատկերումը միշտ համակցվում է Երկրորդ Գալստյան պատկերագրական թեմայի հետ: «Տիեզերական» խորհրդաբանություն կրող դեկորատիվ մոտիվների կիրառումը թերևս կապված է այն հետաքրքրության հետ, որ XI դարի սկզբին ծագեց Անանիա Շիրակացու գործերի նկատմամբ: 1034 թ. Գրիգոր Մագիստրոսի նախաձեռնությամբ վերստին շրջանառության մեջ դրվեցին նրա՝ երկար ժամանակ անտեսված երկերը: Չի բացառվում, որ Անանիայի գիտական ուսումնասիրություններից ստացված գիտելիքները նպաստեցին Հռոմոսի ժամատան պատկերագրական համակարգի մշակմանը:

Հռոմոսի ժամատան գմբեթի պատկերագրական բովանդակությունը հասկանալու համար, պետք է այն դիտարկել ժամանակաշրջանի պատմական համատեքստում: Ժամանակաշրջանը, երբ Յովհաննէս-Սմբատը նախաձեռնեց ժամատան կառուցումը, ծայրահեղ բարդ էր. Բյուզանդիան ձգտում էր կայսրությանը միաձուլել Շիրակի թագավորությունը, Արևելքից մոտենում էր սելջուկների ավերիչ հոսանքը, երկրում առկա էր ներքաղաքական ճգնաժամը: Դրան գումարվեց երկրում տիրող վախճանաբանական մթնոլորտը, որն ստեղծվել էր հազարամյակի լրման և աշխարհի վերջի սպասման ժամանակամիջոցին: Վախճանաբանական մտապատկերները էլ ավելի խորացրեցին XI դարի 20-ական և 30-ական թվականների ընթացքում երկու անգամ տեղի ունեցած արևի խավարումն ու երկրաշարժը: Բնական արհավիրքը ընկալվեց որպես գալիք դժբախտությունների նշան և մեկնաբանվեց որպես Նեոի երևման և աշխարհի կործանման սկիզբը: Անիի արքունիկում, այն առանձնակի խուճապ առաջացրեց, քանի որ կապվեց երկրի քաղաքական իրավիճակի հետ: Անիում, բարձր շրջանները՝ սկսած թագավորից, իրենց սարսափը փարատելու համար մեկնության անհրաժեշտություն էին զգում: Դրա հեղինակավոր աղբյուրը հանդիսացավ իր գիտնականությամբ հռչակված, որպես աստվածաբան և տոմարագետ մեծ հեղինակություն վայելած Յովհաննէս Տարոնացի Կոզեռն անունով վանական վարդապետը: Վերջինս հաստատում է Նեոի երևման և աշխարհի կործանման մասին մարգարեությունը:

Չնայած նրան, որ տվյալ ժամանակաշրջանը ժամանակակիցների կողմից ընկալվում էր որպես իսկական «վախճան ժամանակի», գմբեթի պատկերագրական ծրագիրը ծառայեցված է ոչ թե *Վերջին ժամանակների* մարգարեացված արհավիրքների պատումին, այլ, դրանցից հետո, վերափոխված աշխարհի և Երկնային Երուսաղեմում Մեսսիական դարի հաստատման գաղափարին: Հարկ է նշել, որ Երկնային արքայության մասին պատկերացումն այստեղ կառուցված է ազգային Եկեղեցու իդեալների վրա: Քրիստոսի Երկրորդ Գալուստը ներկայացնող հորինվածքում ներառված են Պահլավունի կաթողիկոսները՝ Գրիգոր Լուսավորիչը, Արիստակեսը, Ներսեսը և

Սահակը, որպես Հայ Եկեղեցու ուղղափառության խորհրդանշական կերպարներ: Երկնային Երուսաղեմը ժառանգած կաթողիկոսների անունների հետ են կապված այն եկեղեցական ժողովները, որոնցում հաստատվեց Հայ եկեղեցու «ուղղափառությունը»: Դրանցից առաջինը՝ Նիկիայի ժողովը, որն Հռոմոսի ժամատան պատկերաքանդակում ներկայացնում է Արիստակես կաթողիկոսը, Անանիա Շիրակացու երկերում հանդիսանում է Հայ Եկեղեցու վարդապետության օրրանը («մեք աշակերտք ենք սրբոց հարցն մերոց որք ի Նիկիայ», ճառ «Ի Յայտնութիւն Տեառն»):